ԿԱՐԾԻՔ

Արմեն Սամվելի Ավետիսյանի՝ «Ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Մերօրյա աշխարհը և հասարակությունը դժվար է պատկերացնել առանց համակարգչային տեխնիկայի և սոցիալական ցանցերի: Ժամանակակից տեղեկատվական դաշտում տեղեկույթի հավաստիության ըմբռնումը օրեցօր ավելի է դժվարանում: Ակնհայտ է, որ տեղեկատվական հոսքը կարող է կրել և՛ կոնստրուկտիվ, և՛ դեստրուկտիվ ազդեցություն անձի համար: Հետևաբար կարևորվում է վերջինիս ճիշտ ընկալման և կիրառման հմտությունների ձևավորման գործընթացը հասարակության յուրաքանչյուր անդամի համար, հատկապես երիտասարդների:

Ուսանողի անհատականության ձևավորման և զարգացման վրա ազդող հզոր գործոններից մեկը տեղեկատվական միջավայրն է: Այն անհատի սոցիալականացման, ինչպես նաև անհատական և սոցիալական գիտակցության ձևավորման կարևորագույն շարժառիթն է և ապահովում է այն գործիքները, որոնցով հասարակությունը անհատին փոխանցում է նորմեր, արժեքներ և վարքագծային կարծրատիպեր: Այն միջավայրն է, որն անմիջականորեն ազդում է անհատի սոցիալական վարքագծի ձևավորման վրա:

Ատենախոսը աշխատանքում ուշադրություն է հրավիրում այն գաղափարի վրա, որ անձի և հասարակության հոգեկան առողջության, անձի հաջող սոցիալականացման, անվտանգ կենսագործունեության համար առաջ են եկել մի շարք վտանգներ, որոնք անմիջականորեն պայմանավորված են կյանքի գրեթե բոլոր ոլորտների ավտոմատացմամբ: Փոխվել են նաև անձի, սոցիալական խմբերի, ողջ հասարակության վրա հոգեբանական, տեղեկատվական ազդեցությունների

ձևերն ու մեխանիզմները, մեթոդները, ազդեցության հետևանքները, որոնք, ըստ էության, վտանգավոր են և՛ որակական, և՛ ծավալային առումներով: Ընդ որում, այդ վիրտուալ ազդեցություններն ունենում են բացասական հոգեբանական, վարքագծային հետևանքներ ոչ միայն անձնային, այլ նաև միջխմբային, միջազգային, միջպետական մակարդակներում: Տարբեր երկրների բանակներում նույնիսկ ստեղծվում են գերժամանակակից տեխնոլոգիաներով զինված տեղեկատվական հոգեբանական պատերազմի ստորաբաժանումներ: Այն դեպքում, երբ մեր հանրապետությունը չունի տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, ռազմավարություն, ինչպես նշում է ատենախոսը:

Հիմնախնդրի արդիականությունը հեղինակը հիմնավորում է նրանով, որ մի կողմից ժամանակակից հասարակությունը, անձը պահանջ ունեն անընդհատ և շարունակաբար օգտագործել տեղեկատվությունը, վերափոխել, ձևափոխել, փոխանցել այն, մյուս կողմից՝ անձը դժվարանում է, չի կարողանում տարբերակել իրականությունը վիրտուալից, իրական փաստը կեղծիքից, ինչը կարող է առաջացնել հոգեկան լարվածություն, իմացական անհերդաշնակություն և որպես արդյունք դրսևորվել ֆրուստրացվածության զգացումի, ցածր ինքնագնահատականի և սեփական անձի նկատմամբ անվստահության ձևով: Նշվածի համատեքստում ատենախոսը թեմայի արդիականությունը պայմանավորում է ժամանակակից պայմաններում ապատեղեկատվության, դրա դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցության կանխարգելման, հիշյալ գործընթացներում ուսանող երիտասարդների տեղեկատվական անվտանգային կարողունակությունների ձևավորման, զարգացման, անձնային որակների, հոգեկան կայունության, ինքնակառավարման, ինքնավստահության, հույզերի կառավարման, իրազեկվածության, մեդիագրագիտության, մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ:

Ներկայացված աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից: Աշխատանքի մեջ հստակ ձևակերպված է հետազոտության նպատակը, այն է՝ ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության մեխանիզմների, դրսևորումների,

հետևանքների բացահայտումն ու կանխարգելման ուղիների մշակումը: Ներածության մեջ տրամաբանական հստակ կապակցվածությամբ ձևակերպված են հետազոտության օբյեկտը և առարկան, ինչպես նաև հիմնական խնդիրները, գիտական նորույթը:

Որպես գիտական վարկած ատենախոսը առաջ է քաշել այն ենթադրությունը, որ ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելումը հնարավոր է, եթե ուսանողը ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության մեխանիզմների, դրսևորումների իմացության և ինքնակառավարման կարողությունների հիման վրա օբյեկտիվ գնահատի իրավիճակը, կանխատեսի հնարավոր բացասական հետևանքները:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը վկայում է ատենախոսի կողմից հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրման և վերլուծության մասին: Մասնավորապես, առանձնացվել են Է.Ֆրոմի, Է.Բերնի մոտեցումները, որոնք վերաբերում են սոցիալական հոգեբանությանը, անձի, սոցիալական խմբի հոգեբանական վերլուծությանը, մանիպուլացիաներին, պահանջմունքներին, մոտիվացիային, անձի ինքնաիրացման վերաբերյալ Ա.Ադլերի հայացքները, Տ.Բրաբազոնի մոտեցումները համուսցանցում անձի «ես» հիմնադրույթի պահանջմունքների բավարարման վերաբերյալ, Մ.Քաստելսի թվային տեխնոլոգիաների և հասարակության հարաբերությունների մոդելը, Ք.Յանգի՝ համացանցից անձի կախվածության, Ս.Ն.Արֆխանովայի, Ե.Ա.Միխեևի, Տ.Ա.Նեստիկի, Մ.Կ.Ջոնսոնի, Մ.Ի.Դոլգովի՝ ապատեղեկատվության նկատմամբ անձի վերաբերմունքին, հետևանքներին, կանխարգեմանը վերաբերող մոտեցումները, Ռ.Դևիսի համացանցային կախվածության էթիոլոգիայի մոդելը, Մ.Պ.Մկրտումյանի տեղեկատվական-հոգեբանական անվտանգության հիմնադրույթները:

Աշխատանքի 1-ին գլուխը տեսական է, որտեղ ատենախոսը մանրամասն վերլուծության է ենթարկել տեղեկատվության սոցիալ-հոգեբանական ազդեցության հիմնախնդիրը՝ անդրադառնալով հայ և արտասահմանյան հեղինակների

մոտեցումներին, կարծիքներին, դրույթներին և հետազոտությունների արդյունքներին (Գևորգյան Ս.Ռ., Հակոբյան Ն.Ռ., Մկրտումյան Մ.Պ., Աղուզումցյան Ռ., Հարությունյան Գ., Հովհաննիսյան Թ.Ա., Лазарева И.Ю., Меерсон А.-Л.С., Шевандрин Н.И., Кон И.С., Brabazon T.W., Castells M., Johnson M.F, Ecker U., Lewandowsky S., Chang eE., Pillai R., Vicario M., Bessi A., Zollo F և այլն): Բազմակողմանի վերլուծությունը հեղինակին հնարավորություն է տվել հանգել այն եզրակացության, որ համացանցի սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցությունը ուսանողների վրա խիստ որոշիչ է համապատասխան իրադրության մեջ և պայմանավորում է ապակառուցողական վարքաձևերի հիերարխիան:

Հիմնախնդրի փորձարարական հետազոտությունն իրականացվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հոգեբանություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, Կերպարվեստ և Երաժշտական կրթություն մասնագիտական կրթական ծրագրերի 200 ուսանողներ: Հետազոտությունն անց է կացվել երեք փուլով: Գիտափորձը անցկացվել է փորձարարական և ստուգիչ խմբերում, ինչն էլ ապահովել է հետազոտության հավաստիությունն ու հուսալիությունը:

Հատկանշական է այն, որ հետազոտության ընթացքում համակցվել են հարցաթերթիկի, թեսթավորման և կոնտենտ վերլուծության, գիտափորձի, մաթեմատիկական վիճակագրական մեթոդները, կիրառվել են Ռ.Քեթթելի՝ անձի բազմագործոն ուսումնասիրման (16-PF), Ա.Բասսի և Ա. Դարկի՝ ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման, Զ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Հանինի՝ տագնապայնության ինքնագնահատման, Վ.Վ.Ստոլինի և Ս.Պ. Պանտիլեևի՝ ինքնավերաբերմունքի ուսումնասիրության, Կիմբերլի-Յանգի՝ համացանցային կախվածության բացահայտման մեթոդիկաները: Ընդ որում հեղինակի կողմից մշակվել է նաև հարցաթերթիկ ապատեղեկատվության ազդեցության հակվածություն ունեցող ուսանողներին բացահայտելու նպատակով: Մեթոդների և մեթոդիկաների կիրառման արդյունքները մանրամասն վերլուծվել են և հստակ

արտացոլված են 2-րդ գլխի 2-րդ ենթագլխի 21 գծապատկերի և 7 աղյուսակների միջոցով:

Աշխատանքում առավել ուշադրության են արժանի ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման միջոցներն ու հնարները և հատկապես «Հոգեբանական պատրաստություն և մեդիագրագիտություն» բուհական ինտեգրացված թրենինգ-դասընթացի մշակված առարկայական նկարագիրը և թեմատիկ տրոհումը՝ նախատեսված ուսանող երիտասարդների համար անկախ մասնագիտական կրթական ծրագրի առանձնահատկություններից, ինչը հիմք է հանդիսացել նաև ձևավորող գիտափորձի համար: Ռեթեսթավորման արդյունքները աշխատանքում ներկայացված են բոլոր մեթոդների և մեթոդիկաների արդյունքների համակցված աղյուսակի տեսքով, ինչը հնարավորություն է տալիս առավել ակնառու դիտարկել արդյունքները:

Հետազոտության արդյունքում արված եզրակացությունները ամբողջությամբ արտացոլում են դրված խնդիրների լուծման աստիճանը, հաստատում են նորույթը:

Զգացվում է, որ իրականացվել է լուրջ, երկարատև և բազմակողմանի աշխատանք: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում մատնանշել մի շարք դիտարկումներ.

1. Հետազոտության ընտրակազմի մեջ ներառվել են տարբեր մասնագիտությունների ուսանողներ, ինչը ողջունելի է: Հետազոտության արդյունքների վերլուծությունը առավել հետաքրքիր կլիներ, եթե իրականացվեր նաև ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության հակվածության վերլուծություն՝ ըստ տարբեր մասնագիտությունների ուսանողների:
2. Աշխատանքում հանդիպում ենք ձևակերպման որոշ ոճային անհստակությունների և վրիպակների, օրինակ՝ էջ 10 (վերջին պարբերություն <<...ցածր ինքնահսկողության բարձր մակարդակ...>>, էջ 60, 62, 72:
3. Առաջարկում ենք նաև տվյալ հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա մշակել մեթոդական ուղեցույց ապատեղեկատվության սոցիալ-

հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման հոգեբանական հնարների և ուղիների ներառմամբ, ինչը կարող է իսկապես գործնական նշանակություն ունենալ ոչ միայն կրթական, այլև այլ ոլորտներում գործունեություն ծավալող մասնագետների համար:

Նշված դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը, քանի որ ատենախոսն իրականացրել է մեծածավալ տեսական և փորձարարական հետազոտություն, որն ընդգրկում է ծավալուն արդյունքներ և վերլուծություններ:

«Ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով ատենախոսությունը ավարտուն, գիտական պատշաճ մակարդակով գրված հոգեբանական աշխատություն է, իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի՝ գիտության տվյալ բնագավառում կարևոր խնդրի լուծում պահանջին, իսկ հեղինակը՝ Արմեն Սամվելի Ավետիսյանը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս.Ա.Մակիչյան

Ս.Ա.Մակիչյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ՝ Մ.Մ.Իսպիրյան

10.01.2024թ.